



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի
արդյունքների վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

Նախաբան.....	3
1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների ալանի կառուցվածքը.....	4
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների ալանի մոնիթորինգի արդյունքները	5
Հղումներ	6

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի 11-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի N°61Ա որոշման (այսուհետև՝ Որոշում) N°1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2017 թվականի տարեկան հաստատված բյուջեի (միայն լիցենզավորված գործունեության մասով) հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված, հետագայում հանձնաժողովի կողմից իրականացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում լրամշակված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգի հիման վրա:

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է 2017 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:


Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում ամփոփվել են հրապարակված տվյալները, համաձայն որոնց ընկերությունը 2017 թվականին պլանավորել է իրականացնել 6 440,0 մլն դրամի (ներառյալ ԱԱՀ) գնում՝ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1


	Գնման առարկա	Գնումների պլանային արժեքը մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում (%)
1	2	3	4
1	Աշխատանք	2 047.0	32%
2	Ապրանք	4 393.0	68%
	Ընդամենը	6 440.0	100%

Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալների մոնիթորինգի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (ներառյալ ԱԱՀ)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2017թ.)
1	2	3	5	7
1	Միակ մատակարար	19	2 691,8	մայիս-դեկտեմբեր
2	Բաց առաջարկների հարցում	54	3 728,0	փետրվար-հոկտեմբեր
3	Առաջարկների հարցում առանց հայտարարության (մրցակցային շեմը չգերազանցող գնումներ)	6	20,2	մայիս-դեկտեմբեր
	Ընդամենը	79	6 440,0	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել, որ.

1. գնումների պլանն ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է հանձնաժողովի Որոշմամբ սահմանված ժամկետում,
2. ընկերությունը գնումների պլանը կազմել է պատշաճ մակարդակով:

Հղումներ

1. Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N°399Լ որոշում,
2. Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու և այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու մասին» N°61Ա որոշում: